

ՀԱՄԱՁԳԱՅԻՆ ՀԵԿԵԼԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԱՅԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1945 թ., հունիսի 16, Ա. լէզմիածին

Ն Ր Ս Ս Ա Ռ Ա Բ Ի Ն

Վեհարանի բակում արտասովոր ցնծություն է տիրում: Ժողովին եկած պատգամավորները բոլորն էլ տոնական տրամադրությամբ սպասում են Ազգային-Եկեղեցականի ժողովի բացմանը:

Վեհապետ Ժամքը 11-ին սկսվում է հանդիսավոր երթը: Առջևից գնում են Ամենայն Հայոց Հայրապետության Ազգընտիր Տեղակալ Ամենապատիվ Տ. Գեղորգ արքեպիսկոպոս Զեորեքչյանը, Տանն Կիլիկիոյ վեհափառ կաթողիկոս Տ. Գարեգին Ա.-ը, Ս. Երուսաղեմի պատրիարք Տ. Կիւրեղ Բ.-ը: Նրանց հետևում են արտասահմանյան և Սովետական Միության Հայ թերերի թեմական առաջնորդները և ընտրված հոգևորական պատգամավորները, այնուհետեւ արտասահմանի աշխարհական պատգամավորները և ապա Հայաստանի, Վրաստանի, Աղորքեցանի և Հյուսիսային Կովկասի պատգամավորները:

Պատգամավորությունը զանգակների ղողանջի տակ վեհարանից դուրս է գալիս և ուղղվում դեպի ճեմարանի շենքը, ուր տեղի է ունենալու ժողովի բացումը: Պատգամավորները բռնում են իրենց տեղերը դաշտին:

Նախագահության սեղանի շուրջը տեղավորվում են մեր եկեղեցու ականավոր ներկայացուցիչները. կենտրոնում տեղ են բռնում Ամեն. Տ. Տեղակալը, Վեհափառ Գարեգին Ա.-ը և Երուսաղեմի պատրիարք Տ. Կիւրեղ Բ.-ը, եղիպատոսի առաջնորդ Գերաշնորհ Տ. Մամրէ Եպիսկոպոս Միությանը: Ներկա է 102 պատգամավոր, որոնցից 28-ը հոգնորական և 74-ը աշխարհական:

Նախագահության շարքում իրենց հատուկ տեղն են գրավում ՍՍՌ Միության Կառավարության ներկայացուցիչը, ՍՍՌ Միության ժողովութեատին կից կրոնական պաշտամունքների Խորհրդի նախագահ Ի. Վ. Պոլյանսկին և Սովետական Հայաստանի կառավարության ներկայացուցիչը, ՀՍՍՌ ժողովութեատին կից Հայ լուսավորչական եկեղեցու Գործերի Խորհրդի նախագահ Ս. Ն. Հովհաննիսյանը:

Տիրում է հանդիսավոր լուսություն: Բոլորի հայացքներն ուղղված են ամենապատիվ

Տ. Տեղակալին և լարված ուշադրությամբ սպասում են նրան: Տեղ Տեղակալը առաջարկում է Տանն Կիլիկիոյ Վեհափառ կաթողիկոս Գարեգին Ա.-ին՝ իր օրհնությունը տալ ներկա եղողներին:


Վեհափառ Հայրապետը ոտքի է կանգնում: Ամբողջ դաշտինը հույսներու լուսմ է Վեհափառի արտասահմած «Հայր մեր» և ավուր պատշաճի աղողքները, որից հետո բառաձայն խոսմբը երգում է «Եղմիածինն ի հօրէ» շարականը: Ապա ողջունի առաջին խոսքն ասում է Ամենապատիվ Տ. Տեղակալը:

Մեկնաբանելով Հայրենական պատերազմի դերը ամբողջ աշխարհում խաղաղությունը վերականգնելու որպես անհրաժեշտ միջոցառում, դրվագելով Սովետական Միության ժողովուրդների տոկունությունն ու հերոսությունը հաղթական պայքարի ընթացքում, Ամեն. Տ. Տեղակալը նշում է այն կարենոր ու մեծ ծառայությունը, որ մատուցել է ուսւ մեծ ժողովուրդը խաղաղության և մարդկային ազգի քաղաքակրթությունը փրկելու գործին (բուն ծափահարություններ):

«Այս մեծ և վիթխարի շարժման մեջ,—աւաց Տ. Տեղակալը, գեպի Հայրենիքն անմասն ու անտարբեր շմաց նաև Հայ ժողովուրդը. նա Հայրենիքի պաշտպանության համար իսպաս դրեց իր ֆիզիկական ու նյութական ողջ կարողությունը, որով գործնականապես ապացուցեց, որ ինքը ուսւ մեծ ժողովուրդի խակական բարեկամն է և կապված է նորա հետ անքակտելի կապերով» (բուն ծափահարություններ):

Այսուհետև շեշտելով այս ժողովի նշանակությունն ու ցերը, Ս. կշմիածնի վերածնունդը և հետ այսու անելիքը հայ ժողովուրդի հոգելոր կյանքում, Տեղ Տեղակալն իր ուղուներն ուղղեց Ազգային-Եկեղեցական ժողովին, Սովետական Միության Կառավարության ներկայացուցիչը, ի. Վ. Պոլյանսկուն, Սովետական Հայաստանի Կառավարության ներկայացուցիչը Ս. Ն. Հովհաննիսյանին, Տանն Կիլիկիոյ Վեհափառ կաթողիկոս Գարեգին Ա.-ին, Երուսաղեմի պատրիարք Տ. Կիւրեղ Բ.-ին, արտասահմանի և մեր թե-

Համազային սկելեցական ժողովի առաջին նիստը



մերի թեմական առաջնորդներին, փոխ թեմակալներին, պատգամավորներին և ներկա դատավոր հյուրերին:

Վերջացնելով ողջումի իր խոսքը, Ամենապատիվ Տեր Տեղակալը Ազգային-Եկեղեցական ժայռովը հայտարարեց բացված (բուռն և երկարատև ծափահարություններ):

Ամեն. Տ. Տեղակալից հետո ողջումի խոսք է ասում Տանն Կիլիկիո Վեհափառ կաթողիկոս Գարեգին Ա:

Դրվատելով մեր ժողովրդի և պետության ձեռք բերած նվաճումները, Վեհափառը անհամ բերկրանքով իր գոհումափությունն է հայտնում Սովետական Հայաստանի Կառավարությանը, օրհնում է ժողովը և հաջողություն բարեմաղթում նրա աշխատանքներին:

Ամեն. Տ. Տեղակալը խոսքը տալիս է ՍՍՌ Միության Կառավարության ներկայացուցիչ, ՍՍՌ Միության ժողովության կից կրոնական պաշտամունքի գործերի նորմերի նախագահ Ի. Վ. Պոլյանսկովն:

Ժողովը նրան դիմավորում է բուռն և երկարատև ծափահարությամբ:

Ի. Վ. Պոլյանսկովն ասում է ողջումի իր խոսքը.

Կրկին դաշնամբ թնդում է ազգակալից ծափահարություններից:

Խոսքը տրվում է Հայաստանի ժողովության կից Հայ Եկեղեցու գործերի Խորհրդի, նախագահ Ա. Ն. Հովհաննիսյանին: Ժողովը բուռն ծափահարություններով ողջումում է Հայաստանի Կառավարության ներկայացուցչին:

Այնուհետև Ամենապատիվ Տեր Տեղակալն առաջարկում է ժողովին՝ ողջումի հետագա դիմումը ՍՍՌ Միության Մարշալ Ա. Վ. ՍՏԱԼԻՆին:

ՍՏԱԼԻՆ անունը բոցավառում է ներկա եղողներին, բոլորը տաքի են կանոնում և բուռն ծափահարությունների որոտը երկար ժամանակ թնդացնում է դահլիճը:

Որոշվում է ողջումի հեռագիր ուղարկել աշխարհի ամենամեծ մարդուն, Մեծ ՍՏԱԼԻՆին:

Տեր Տեղակալից առաջարկությամբ ժողովն անցնում է ատենապետություն ընտրելուն: Միաձայն քվեարկությամբ ատենապետներ են ընտրվում հոչակալոր բանաստեղծ Ավետիք Խաչակյանը, Սահեկյան Մալիսայանը և պատգամավոր Ճանիկ Զարին:

Քարտուղարության կազմում ընտրվում են Բուլղարիայի առաջնորդ Տ. Դրիգոր Վարդապետը, Վրաստամի փոխթեմական առաջնորդ տ. Սահակ ավագ քահանա Սահակյանը, տ. Վահան քահանա Թավարբեկյանը և պատգամավոր Եազգան Առաքելը:

Մանդատավայրին հանձնաժողովի կազմում ընտրվում են Բելրութի առաջնորդ գերաշնորհ Տ. Արտավագդ արքեպիսկոպոսը, Ռիումինիայի առաջնորդ Տ. Վաղգեն վարդապետը, պատգամավորներ Աղաջանյան Արմենակը և Սեդրակ Թարյանը:

Ազգային-Եկեղեցական ժողովի հաջորդ նիստը նշանակվում է Հունիսի 18-ին, առավոտյան ժամը 11-ին:

Ն Ի Ս Յ Ե Ր Կ Ր Ո Ր Դ

1945 թ. Հունիսի 18-ին, առավոտյան ժամը 11 և Կ-ին ճեմարանի դաշիճում սկսվում է Ազգային-Եկեղեցական ժողովի նրանորդ նիստը:

Ժողովին նախագահում է Տանն Կիլիկիո Վեհափառ կաթողիկոս Գարեգին Ա, ամենապետում է բանաստեղծ Ավետիք Խաչակյանը:

Ամենապատիվ Տեր Տեղակալը զեկուցում է Մայր Աթոռի գործունեության վերջին 4 տարիների մասին, սկսած 1941 թ. ապրիլի 10-ից մինչև ցայտօր:


Այնուհետև ատենապետը կարդում է այն հայտապիրը, որ Ամենապատիվ Տեր Տեղակալը մատուցել էր ՍՍՌ Միության ժողովության նախագահ Ի. Վ. ՍՏԱԼԻՆին ժողովը հունիսի առաջնադրությունը:

Ժողովուներով օվացիա է անում ի պատիվ Հանճարեղ Առաքելորդի Հայտագիր ընթերցումից հետո ատենապետը ցույց է տալիս ժողովականներին Ի. Վ. ՍՏԱԼԻՆի մակարությունը:

Նորից բռնկվում են Հունիսի առողջապահության և պրոտակից ծափահարությունները և «ԿԵՑՑԵ» Մօ՛ ՍՏԱԼԻՆը՝ բացականչությունները:

Վեհափառ կաթողիկոսը առաջարկում է ժողովին իր երախտապիսությունը հայտնել Մարշալ ՍՏԱԼԻՆին: Ժողովը հունիսի և խանդակա ծափահարություններով հայտնում է իր հարգանքն ու երախտապիտությունը Մեծ ՍՏԱԼԻՆին:

Ժողովն անցնում է օրակարգին և քրննում է Ազգային-Եկեղեցական ժողով գումարելու կանոնադրությունը:



Այստեղ Տեղակալը զեկուցում է նամազ զային եկեղեցական ժողովին

Բարձրապատիվ տեր Ռուբեն ծայրագույն վարդապետ Դրամբյանը հոդված առ հոդված կարգում է կանոնադրությունը, որը ընդունվում է ժողովականների կողմից թիվ 4 փոփոխություններով:

Քառորդ ժամ հանգստից հետո Ժողովը վերականգնում է, Բանաստեղծ Ավետիք Խաչականն առաջարկում է զնորհակալություն և երախտիք Հայտնել Սովետական Հայաստանի բարեխնամ կառավարությանը: Ժողովականները հոտնկայք և բուռն ծափահարություններով ընդունվում են այդ առաջարկը:

Ամենապատիվ Տեր Տեղակալը հայտնում է Ժողովին, որ պատգամավոր Ստ. Մալիսայանը «Եջմիածին» ամսագրին ուղարկած մի հոդվածով առաջարկ է արել տոնել

Մայր Աթոռի Կիլիկիակացից Ս. Եջմիածին փոխադրվելու 500-ամյակը: Ժողովականները միաձայն ընդունում են այս մտահղացումը և որոշում տոնել 500-ամյակը:

Վեհափառ կաթողիկոսը հակիրք կերպով պատմական տեղեկություններ է հաղորդում Աթոռի փոխադրման մասին և ցանկություն հայտնում մեծ շուրջով տոնել 500-ամյակը, ինչպես որ տոնվել է տառերի դյուար, Աստվածաշնչը: Թարգմանությունը և այլն:

Ժողովը որոշում է հաջորդ նիստին 500-ամյակը տոնելու բանաձև և ծրագիր ներկայացնել:

Ժողովը 2-ին 10 րոպեին Ժողովը հայտարարվում է փակված: Հաջորդ նիստը նշանակվում է Հունիսի 19-ին, առավույնաժամը 11-ին:

Ն Ի Ս Տ Ե Ր Ր Ո Ր Դ

Ազգային եկեղեցական Ժողովի երրորդ նիստը տեղի ունեցավ Հունիսի 19-ին, Հոգեմուր ճեմարանի դահլիճում, առավոտյան ժամը 12 և 20 րոպեին:

Ժողովին նախագահում է Տանն Կիլիկիության կաթողիկոս Գարեգին Ա:

Ժողովին ատենապետում է բանաստեղծ Ավետիք Խաչականը: Ամենայն Հայոց Ազգային Տեղակալ Ամենապատիվ Տ. Գեղվորդ արքեպիսկոպոսը հայտնում է Ժողովականներին ի գիտություն, որ Ամերիկայի արևելյան թեմի պատգամավոր Հայկ Գավումքյանը նշանակված է ատենապետության անդամ:

Խոսքը տրվում է Տ. Ռուբեն ծ. վարդապետին, որը կարգում է Ազգային-Եկեղեցական Ժողովի բացման նիստի արձանագրությունը: Ժողովը միաձայն հաստատում է արձանագրությունը: Այնուհետև Տ. Սահակ ավագ քահանա Սահակյանը կարգում է 2-րդ նիստի արձանագրությունը, որը նույնական միաձայն ընդունվում է Ժողովի կողմից:

Ատենապետ Ավետիք Խաչականը կարգում է Սովետական Հայաստանի Գերագույն Սովետի նախագահ Մացակ Պետրոսի Պապյանին ուղղված ողջույնի գրությունը:

Ժողովը բուռն ծափահարությամբ ընդունեց այս ողջույնը:

Օրակարգի հաջորդ հարցը Հայ եկեղեցու Սահմանադրության քննությունն է: Ամենապատիվ Տեր Տեղակալն առաջարկում է հետաձգել այդ հարցը, որպեսզի պատգա-

մափորները ժամանակ ունենան կարդալ և ուսումնասիրել:

Ատենապետ Ավետիք Խաչականը Եղագակության պատգամավոր Ճանիկ Չափրին հրավիրում է Ժողովի ատենապետությունը շարունակելու:

Ժողովի քննության է դրվում ճեմարանի նշանապետական ապահովության և պահպանության հարցը:

Այս հարցի մասին զեկուցում է Ամենապատիվ Տեր Տեղակալը: Լուսաբանելով Հոգեմուր ճեմարանի ծրագիրը, ուղղությունը, Տ. Տեղակալը նշում է ճեմարանը նյութապետական գերազնորհ Տ. Արտավազդ արքեպիսկոպոսը կարգում է Հոգեմուր ճեմարանի նախահաշիվը: Պարզվում է, որ ճեմարանի տարեկան բյուջեն 40 ուսանող պահելու համար կազմում է 1.150.000 ռուբի այն դեպքում, եթե պետական կոռպերատիվ գըներով նյութեր և պարագաներ ստացվեն:

Այնուհետև Ամենապատիվ Տեր Տեղակալը շեշտելով տպարան ունենալու անհրաժեշտությունը եկեղեցական գրքեր, մատենագիրներ հրատարակելու, ինչպես և «Եջմիածին» ամսագրի տպագրությունը ապահովելու համար, հայտնում է, որ Սովետական բարեխնամ կառավարությունը թուլարերէ է Մայր Աթոռին ունենալ իր սեփական տպարանը:

Եթե Տ. Տեղակալը հայտարարում է, որ այդ առաջին կրոնա-եկեղեցական տպարանի թուլարելությունն է ողջ Սովետական Միության

սահմանների մեջ, դահլիճը թնդում է խանդակառ ծափահարություններից՝ ի պատճիվ Սովորական Միության։ Հայտարարվում է մի փոքր ընդմիջում՝ Դաղարից հետո, ժողովը վերսկսվում է ճանիկ Զագրի ատենապետությամբ։

Թննության է դրվում Մայր Աթոռի բյուջեի հարցը։

Մտքերի լայն փոխանակությունից հետո միաձայն ընդունվում է Տ. Վազգեն վարդապետի և պատգամավոր Փափազյանի կազմած բանաձեկը։

Այնուհետև Տանն Կիլիկիո վեհափառ կաթողիկոսը զեկուցում է Մայր Աթոռի Կիլիկիայից Ս. էջմիածին փոխադրվելու 500-ամյակի տոնակատարության մասին։

Այս խնդրի կապակցությամբ ժողովը լսելով պրոֆ. Աշոտ Արքահամյանի և ակադեմիկոս Ստեփան Մալիսասյանի կողմից տերված լուսաբանությունները, ընդունեց Վեհափառ կաթողիկոս Դարեգին Ա.-ի հետևակա բանաձեկ։

«Անդրադառնալով Ս. էջմիածնի և Ամենայն Հայոց Հայրապետության կատարած դերին անցած 500 տարիների ընթացքում, դրան է սրել և լուսավորել ժողովրդյան միաբը և գիտակցությունը արերկարատե շրջանի մասին. այս ժողովի ժողովն օգտակար է համարում և որոշում է 1945—1946 տարին հայտարարել Մայր Աթոռի վերահաստատման հոբելյանական տարի՝ ընդունելով միևնույն ժամանակ Տանն Կիլիկիո կաթողիկոսության հարատեսությունը նույն ժամանակի ընթացքում, որ ոչ միամյ չի խանգարել եկեղեցվո միության գաղափարը, այլև նման գեր է կատարել ազգապահպանության գործում իրեն ենթակա թեմերի մեջ, ինչպես և Երուսաղեմի և Կ. Պոլսո պատրիարքությունները»։

Ժողովը բանաձեկի բլեարկումը և քննումը հետաձգվում է հաջորդ նիստին. Ժամը 3-ին և 30 րոպեին փակվում է նիստը։

Ն Ի Ս Տ Ա Ր Բ Ո Ր Գ Գ

Ազգային-եկեղեցական ժողովի շրորդ նիստը տեղի ունեցավ սուլյն 1945 թ. հունիսի 20-ին ճեմարանի դահլիճում։

Ժողովին ներկա էին Սովորական Միության ժողովում սովորին կից կրոնական պաշտամունքների Խորհրդի նախագահ Ի. Վ. Պոլյանսկին, Սովորական Հայաստանի ժողովում սովորին կից հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Հովհաննիսյանը, անգլիական եկեղեցու Քենթրափերիի արքեպիսկոպոսարանի ավագ երեց գերհարքելի դոկտոր Հելեթ Չոնսոնը։

Ժողովի ատենապետը՝ Ամերիկայի արևել-

յան թեմի պատգամավոր Հայկ Գալուկյանը խոսքը տալիս է մանդատային հանձնադովի նախագահ Բեյրութի առաջնորդ Տ. Արտավազդ արքապիսկոպոսին։

Գերազնորդ Տ. Արտավազդ արքեպիսկոպուր հայտնում է, որ մինչև այժմ ժամանել են ժողովին 104 պատգամավոր, որոնցից 31-ը հոգևորականներ են և 73-ը՝ աշխարհականներ։

Նախորդ նիստի որոշման համաձայն ծանուցվում է ժողովին, որ բյուջեարային հանձնաժողովին մասնակցում են հետևյալ պատգամավորները։

Կալիֆորնիայի	թեմից
Եղիպտոսի	»
Անգլիայից	»
Բուլղարիայից	»
Թերանի	»
Իրանա-Հնդկական	»
Վրաստանի	»
Բաքի	»
Ֆրանսիայի	»
Պաղեստինի	»
Հյուսիսային Կովկասի	»
Շիրակի	»
Ալբարատյան	»
Ատրպատականի	»

Հայկ Գալուկյան
Ճանիկ Զագրի
Սարգիս Քյուրքչյան
Գևորգ Միքանակյան
Բժ. Բագրատ Ավագյան
Լևոն Տեր-Հովհաննիսյան
Փաշա Մելիք-Կարապետյան
Նիկողայոս Խաչատրյան
Գեղամ Ֆեներճյան
Պեղոն Ճերյան
Համազասպ Տեր-Հակոբյան
Վարոս Սարգսյան
Մինաս Մինասյան
Բարգեն Օլովչյան

Տանն Կիլիկիո
Ռումինիո
Ն. Նախիշևանի

Թերթից
»
»

Ժողովը հանձնարարեց ընտրված հանձնաժողովին ունենալ իր խորհրդակցական նիստը «Բնուուրիստ» Հյուրանոցում, երեկոյան ժամը 5-ին:

Տ. Արտավազդ արքակիսկոպոսն առաջարկում է ամսի 22-ին նիստ չունենալ և Օշական մեկնել Մեսրոպ Մաշտոցի տոնը կատարելու։ Ամենապատիվ Տ. Տեղակալն առաջարկում է Օշականի ուկտագնացությունը հետաձգել Հայրապետական օծումից հետո։

Ատենապետ Հայկ Գավուկչյանը խնդրում է փերազնոր Տ. Արտավազդ արքակիսկոպոսին շարունակել ժողովի ատենապետությունը։

Ամենապատիվ Տ. Տեղակալը հայտարարում է, որ Պեյրութի պատգամավոր Մկրտիչ Մարլանը հանձնառու է եղել Ս. Էջմիածնի տպարանի ամբողջ սարբավորումը իր հաշվով Հայթայթել։

Ժողովը բուժն ծափահարությամբ ընդունում է Մարլանի նվիրատվությունը։

Ատենապետ Տ. Արտավազդ արքակիսկոպոսը քննության դնելով ճեմարանի պահպանման հարցը հանձնառու եղավ մեկ սանի ծափերը հոգալ։ Այս կապակցությամբ Ամենապատիվ Տ. Տեղակալը հայտնեց, որ յուրաքանչյուր սանի տարեկան ծախքը կազմում է 500 դոլար։

Տանն Կիլիկիո վեհափառ կաթողիկոս Գարեգին Ա.-ը հայտնում է, որ Եգիպտոսից տիար Կարապետ Սարյանը մի գովար է կտակել ճեմարանի պահպանման ֆոնդին, որի տարեկան տոկոսը կազմում է 50 եղիպտական սոկի և որ ճեմարանը իր հարատեսության ամբողջ ժամանակաշրջանում ամեն տարի կարող է 50 եղիպտական սոկի ստանալ։ Վեհափառը հայտարարեց, որ առաջին տարվա 50 սոկին բերել է իր հետ և կհանձնի ամենայն հայոց նորընտիր կաթողիկոսին։

Այս հայտարարությունը ժողովում առաջ բերեց մեծ խանգամակություն, որի հետեւ վանքով հետևյալ հանձնառությունները տեղի ունեցան։

Կալիֆորնիայի թեմը հանձն առավ հոգալ 10 ուսանողի ծախսը, Ամերիկայի արևելյան թեմը՝ նույնպես 10, Իրանա-Հնդկաստանի առաջնորդ Վահան ծ. վարդապետ Կոստանյանը հայտարարեց, որ իր թեմը հանձն է առնում

Մկրտիչ Մարլան
Դոքտոր Արտաշես Տիրամուլյան
Տ.-Մկրտիչ Չորչովիան։

4 թոշակառու պահել, բացի այդ, հօգուտ ճեմարանի պահպանման հանգանակել է Մի երեկույթի միջոցով 17.000 թուման և հանձն առավ 20.000 թուման ևս հանգանակել։ Տանն Կիլիկիո կաթողիկոսարանը ճեմարանի համար հատկացնում է տարեկան 5.000 դոլար, Եգիպտոսի թեմի առաջնորդ գերաշնորհ Մամբրե եպիսկոպոսը խոստացավի իր թեմի միջոցներից հօգուտ ճեմարանի հատկացնել տարեկան 3.000 եղիպտական սոկի, ակագիմիկոս Ստեփան Մարլանը հայտարարեց, որ ինքը կհոգա մեկ թոշակառուի ծախսը, Տ. Մահակ ավագ քահանա։ Մահակյանը Վրաստանի թեմի կողմից հայտարարեց, որ իրենց թեմը կվճարի վեց թոշակառու պահելու ծախսը, Մկրտիչ Մարլանը հանձն առավ իր անունով պահել մեկ ուսանող, Կալիֆորնիայի թեմի էդեմի տիկնանց Միությունը՝ մեկ ուսանող, Ճանիկ Զաքրի՝ 2 ուսանող, Օժեն Փափազյանը (Եգիպտոս)։ 1 սան, Ատրապատկանի թեմը՝ 1 սան, Ամերիկայի արևելյան թեմի պատգամավոր Հայկ Գավուքյանը՝ 3 սան։

Այսպիսով ժողովը ավարտված համարեց ճեմարանի պահպանման խնդիրը 40 ուսանողի սահմաններում, ընդ որում սան պահողները հանձնառու եղան թոշակները վրամարել վեց տարվա, այսինքն ճեմարանի լրիվ դասընթացի համար (Յ դասարան և Յ լարան)։

Այսուհետև ժողովին դրվեց Մայր Աթոռի պահպանության հարցը։

Տանն Կիլիկիո վեհափառ կաթողիկոսն առաջարեց Մայր Աթոռի պահպանության համար սահմանել ուսուավորչի լուսաւորքը բոլոր եկեղեցիների ամբողջական հասույթների 4 տոկոսի համեմատությամբ։ Ժողովը միաձայնությամբ ընդունեց այս առաջարկը։

Այս առնությամբ Բուլղարիայի պատգամավոր Գեորգ Միքթուպճյանը հանձն առավ 5.000 ուսուավորի նվիրել Մայր Աթոռի պահպանմանը։

Տանն Կիլիկիո վեհափառ կաթողիկոսը ողջունելով ժողովին ճեմարանի պահպանման խանգամակառ հանձնառությունները, առաջարեց հոգևոր ճեմարանի մատենադարանը եկեղեցական, կրոնական և աստվա-

ծաբանական գրականությամբ ճոխացնելու համար ևս խորհեցի:

Այս հարցի առթիվ Ռումինիայի փոխթեմական Տ. Վազգեն վարդապետը առաջարկեց հետևյալ բանաձեռ, որ նույնությամբ ընդունվեց.

«Ժողովը մեծ գոհունակությամբ և երախտագիտությամբ լսելով, որ Սովորական Հայաստանի բարեխնամ կառավարությունը Ս. էջմիածնին վերադարձուցած է ճեմարանի մատենադարանը, փափագ կը հայտնե և առաջարկ կը բերե նորընտիր Վեհափառ Հայրապետին առյուն մատենադարանը ճոխացնել կրոնական, եկեղեցական և մատենագիտական ուղղությամբ»:

Օրակարգի հաջորդ հարցը Մայր տաճարի նորոգության խնդիրն է: Երուապղեմի այն առաջարկը Հայրը անհրաժեշտ համարելով Մայր տաճարի վերանորոգումը և այն համարելով անհետաձգելի, կոչ արագ պատգամավորներին այն համարել պատվի խնդիր և հանձն առնել հոգալու պահանջվող ծախսերը:

Տանն Կիլիկիո Վեհափառ կաթողիկոս Գարեգին Ա-ը ժողովին հաշվետվություն ներկայացրեց իր կատարած հանգանակության մասին, երբ ինքը որպես հայրապետության լիազոր նվիրակ գործուղվել էր արտասահման հիշյալ նպատակով: Պարզվեց, որ նրա հանգանակել է 37.114 դրամը, որպիսի գումարը պահ է տրված ապահով դրամատների և հաստատությունների մոտ: Ապա ներկայացրեց ժողովին հետեւյալ բանաձեռ. «Ժողովը լսելով հատուկ զեկուցում Ս. էջմիածնի տաճարի նորոգության և կատարված հանգանակության մասին, անհրաժեշտ և անհետաձգելի է համարան նորոգման կատարումը: Հազար վեց հարյուր քառասուն տարվա պատմական այդ կոթողի կյանքը պետք է հարատաել և վայելու վիճակի վերածել, որ հայ ժողովրդի պատիվն է: Բայց ի նկատի ունենալով, որ Մայր Աթոռի վերակազմության և պահպանության, ինչպես և ճեմարանի, տպարանի և այլ կարիքները ժողովրդական հանգանակությամբ և նվերներով պիտի լրացվին,

Ն Ի Ս Տ Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Դ Ք

1945 թ. հունիսի 21-ին, առավոտյան ժամը 12-ին և 30 րոպեին բացվում է Ազգային եկեղեցական ժողովի հինգերորդ նիստը:

այդ պատվաբեր գործի կատարումը կկամենար մեր մեծահարուստ ազգայիններից մեջ կամ մի քանիսը միասին հանձն առնեին: Ուստի և խորում է Ամենայն Հայոց նորընտիր և Տանն Կիլիկիո Գարեգին Ա. կաթողիկոսներին հետամուս լինել և հարաբերության մեջ մտնել, որոնց որ հարկավոր կհամարեն, գործը գլուխ բերելու համար»: Ժողովը անդադրում ծափահարություններով միաձայն ընդունեց նորին վեհափառության բանաձեռը:

Տ. Արտավազգի արքեպիսկոպոսը առաջրկում է ժողովին հարգանքի խոսք ասել հարգելի տոքոր Հիղեթ Զոնսոնին, որը ներկա լինելով ժողովին, ուշի ուղղվ հետեւ վում է ժողովի ընթացքին: Ժողովը նրա առաջարկն ընդունում է, որից հետո նախնդիր Ամերիկայի արևելյան թեմի առաջնորդ Տեր Տիրան ծ. Վարդապետին՝ անգլերեն լեզվով հայտնել Զոնսոնին ժողովի որոշումը: Ի պատասխան ժողովի ցույց տված ուշադրության, դոկտոր Զոնսոնը ասում է հետեւյալը:

«Մրգագան հայրեր ի Քրիստոս և քրիստոնյա եղբայրներ: Այս փիստ պատմական պահին, այս փառավորությունների մեջ եկեղեցու զարթոնքի առիթով տեսա վերականգնումը այս երկրի ճարտար արքեստի և կրթության, հիմա էլ տեսնում եմ այս եկեղեցու վերադարձը:

«Քսանվեց տարիներից ի վեր այս երկիրը հառաջադիմում է. Սովետական Միությունը շատ բան պետք է շահի եկեղեցու վերականգնումով: Զեղ վատահացնուամ եմ, որ մեր երկիրը շատ մեծ հետաքրքրությամբ հետեւում է այս շարժմանը: Անզիմայի մեջ շպիտի գտնվի մի եպիսկոպոս, որը շուղենար ներկա լինել այս պատմական պահին»:

Ի պատասխան այս ելութի, ամենապատիվ Տ. Տեղակալը հայտնեց, որ իրեն որպես հիշատակ մի նվեր պիտի հանձնի, որը միշտ իրեն պիտի հիշեցնի այս դարաշը տաճարը:

Հաջորդ նիստու նշանակվում է հունիսի 21-ին: Ժամը 1-ին 15 րոպեին ժողովը հայտարարվում է փակված:

Ժողովին նախագահում է Տանն Կիլիկիո Վեհափառ կաթողիկոս Գարեգին Ա-ը: Կարդալով տերունական աղոթքը և ավուր պատշաճի բարեմաղթություններն անելուց

Հետո նա ժողովը հայտարարում է բացված:

Առենապետում է բանաստեղծ Ավետիք Խսահակյանը, որի առաջարկով նախ կարդացվում է նախորդ նիստի արձանագրությունը, որը մի շաբթ ուղղումներից Հետո ընդունվում է:

Ամերիկայի արևելյան թեմի առաջնորդ գերազատիկ Տ. Տիրան վարդապետը խոսք է խնդրում մի կարևոր հայտարարություն անելու համար: Առենապետը խոսքը տալիս է նրան: Նա հայտարարում է, որ մոտ 30.000 դոլար գումարի շափով նվերներ է բերել Մայր Աթոռին որպես գարպաս: Ժողովը ծափառարությամբ է ընդունում այս նվերը և բոլորի սիրալիք հայցքներն ուղղվում են հայտարարություն անողին:

Այնուհետև ատենապետը ժողովի քըն-նարկման է դնում բյուջեի խնդիրը: Այս առթիվ խոսքը արվում է բյուջեսալին հանձնաժողովի նախագահ: Սարգիս Թյուրքչյանին: Նա կարդում է հանձնաժողովի հետեւյալ որոշումը.

«Ա. Հանձնաժողովը միաձայնությամբ որոշում է, որ եկեղեցիների եկամուսներից գանձվող 2 տոկոսի առաջարկը, որ պատ-գամավորական ժողովի կողմից ընդունվել է արգեն, գործադրվի.

«Բ. Նկատի ունենալով, որ թեմերից ըս-տացվելիք եկամուսն անորոշ է և միևնույն ժամանակ էջմիածնի այս տարվա ծախսերը նույնպես անորոշ են, ինչպես նաև կա-տարքի վերանորոգման ծախսերը,— ուս-տի ժողովը որոշում է նորընտիր կաթողի-կոսի իրավասությանը թողնել տնօրինելու արդ հարցի լուծումը ըստ իւր հայեցակետի, հուսալով, որ հայ ազգը և հայ բարերար-ները սիրով ընդառաջ պիտի երթան Հայ-րապետի կոչին»:

Լսելով վերոհիշյալ որոշումը, Ամենապե-տիկ Տ. Տեղակալն առաջարկեց բյուջեի

քննարկումը Հետաձգել հաջորդ նիստին, երբ ինքը հնարավորություն կունենա ժողո-վին ներկայացնել գրավոր կերպով Ս. էջ-միածնի համար պահանջվող անհրաժեշտ բյուջեն: Ժողովն ընդունելով այս առաջար-կը, հարցի քննարկումը թողեց հաջորդ նիս-տին:

Մանդատային հանձնաժողովի նախագահ գերազնորհ Տ. Արտավազդ արքեպիսկոպոսը հայտարարեց, որ մանգատային հանձնա-ժողովն անհրաժեշտ է գտել ատուգել պատ-գամավորների անվանացուցակը: Հանձնա-ժողովի անդամ գերազատիկ Տ. Վաղեն վարդապետը մեկ առ մեկ կարդաց պատ-գամավորների անունն ու ազգանունները, ո-րով պարզվեց, որ մինչև այժմ 106 պատ-գամավոր է ժամանել Ս. էջմիածնին և ժո-ղովները տեղի են ունենում նրանց մաս-նկցությամբ:

Պատգամավոր Ստեփան Մալխասյանը ձայն խնդրելով առաջարկում է ժողովին՝ Մայր տաճարի վերանորոգության հատուկ նախագիծ և նախահաշիվ պատրաստել, ժողովը միաձայն ընդունում է այս առա-ջարկը և անցնում Հայոց եկեղեցու Սահ-մանադրության նախագծի քննությանը: Նախագահ այս ինդրի քննության անցնելը, Ամենապատիկ Տ. Տեղակալն իր ելույթով բացատրում է ժողովականներին խնդրի լրջությունը և բացառիկ կարևորությունը և առաջարկում է ամեն հետաձգել հաջորդ ժո-ղովին, երբ հնարավոր կլինի պատգամա-վորներին ներկայացնել Սահմանադրության նախագծի վերջնականացնել ձևակերպված տերմուրը:

Ժողովը որոշում է նախագծի քննարկումը Հետաձգելու:

Ժողովը փակվում է ժամը 2 և 12 րո-պեին: Հաշորդ նիստը նշանակվում է հու-նիսի 22-ին, առավոտյան ժամը 11-ին:

Ն Ի Ս Վ Ե Ց Ե Ր Ո Ր Դ

Ազգային եկեղեցական ժողովի 6-րդ նիստն սկսվում է 1945 թ. հունիսի 22-ին, առաջլույան ժամը 12-ին, նախագահությամբ Տանն Կիլիկիո Վեհափառ կաթողիկոս Գարեգին Ա-ի, որը պատշաճ աղոթք-ներն ասելուց հետո, ժողովը բացված հայ-րարդից:

Ժողովի ատենապետ Ճանիկ Չափրը կար-դաց ժողովի հետեւյալ օրակարգը.

1. Եկեղեցական Սահմանադրության քըն-նությունն ու վավերացումը:

2. Ս. էջմիածնի պահանձման բյուջեն և նրա ընդունումն ու հաստատումը:

3. Ամենայն Հայոց Հայրապետի ընտրություն:

Ժողովի միաձայնու ցանկությամբ որոշ-վեց նախ գրադիւ բյուջեի քննությամբ, հետո Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտ-րությամբ, իսկ Սահմանադրության քննար-

կումը, որպիս շատ ժամանակ պահանջող հարց, հետաձգել հաջորդ նիստերին:

Տանն Կիլիկիո կաթողիկոս Վեհափառ գարեգին Ա-ը խոսք առնելով, ժողովի ուշադրությունը հրավիրեց այն հանգամանքի վրա, որ ժամանակն է ընտրության համար նախապատրաստվելու Սակայն մի շաբթ ժառախոսներ անհրաժեշտ գտան ընտրությունը արագացնել և ընտրական ժողովն սկսել ժամը 3-ին, որպեսզի նախագահությունը ժամանակ ունենա ընտրական նախապատրաստությունները հոգալ: Զայների ձնշող մեծամասնությամբ որոշվեց երեկոյան նիստում գրավիկ կաթողիկոսի ընտրությամբ: Այս որոշումն ընդունելուց հետո ժողովն անցավ օրակարգի առաջին հարցին՝ բյուզենի քննարկմանը:

Խոսք առնելով, Ամենապատիվ Տ. Տեղակալը մանրամասնորեն զեկուցեց անցյալ շորս տարիների ծախքերի ու այն աղբյուրների մասին, որոնցով հոգացվել են Մայր

Շ Ե Տ Ր Ա Կ Ա Յ Ն Ն Ի Ս Ց Է

Ամենայն Հայոց Վեհափառ կաթողիկոս ընտրելու համար գումարված ժողովն սկզբանը մանրամասնորեն զեկուցեց անցյալ շորս տարիների ծախքերի ու այն աղբյուրների մասին, որոնցով հոգացվել են Մայր

Մայր տաճարի առաջին մասում, դեպի զանգակատունը դրված են նախագահության սեղանը և աթուները, նրա երկու կողմերում դեպի հյուսի և հարավ շարված են պատգամավորների աթուները, հշման սեղանի առաջ, կենտրոնում դրված են կինոնկարահանման առարատաները և տեղավորված նկարիչները նախագահության սեղանի աջ և ձախ կողմերում, ինչպես և հշման սեղանի ուղղությամբ: Տաճարի բոլոր դռները փակ են, բացի հյուսիսային դռնից, որի մուտքը փակված է մեկ փոքրիկ սեղանով ուր նստած են մանդամատային հանձնաժողովի անդամները և միայն մի ներ արահետ են թողել, որով մեկ պատգամավոր կարող է ներս մտնել:

Մուտքի առաջ կանգնած են պատգամավորները տոմսերը ներկայացնում են մանդամատային հանձնաժողովին, հատուկ մատյանում ստորագրում իրենց անոնմ, ազգանունը, ուր և նըշվում է, ո՞ր թեմի պատգամավոր լինելը և ապա գրավում իրենց տեղերը: Աշխարհական պատգամավորների ստոպումն ու ցու-

Աթոփի ծախսերը: Տեղակալ Սրբազնի կարգադրությամբ Տ. Ռուբեն ծ. վարդապետը կարդաց 1945—46 թ. բյուզենի նախահաջիկն իր բոլոր մանրամասնություններով, որով Ա. էջմիածնին ենթակա հիմնարկությունների պահպանման ընդհանուր գումարը կազմում է 3.100.000 ռուբլի:

Ժողովը լսելով այս հարցի հետ կապված լուսաբանություններն ու հավելումները, ընդունեց Տ. Վագգեն վարդապետի կազմած հետևյալ բանաձեռք:

«Մայր Աթոփի պահպանման համար որոշված 5 տրկոս եկեղեցական տուրքին զուգընթաց ժողովը կարող է շարունակել ավանդաբար ընդունված ալուսավորչի լուման» հօգուտ Ա. էջմիածնի անհատական նվիրատվության եղանակով»:

Բանաձեռք ընդունվեց միաձայն, որից հետո ատենապետը զարդար հայտարարեց ժամը 3-ին Մայր տաճարում նիստը վերսկսելու և ընտրությամբ գրավիկները հոգացվելու համար:

Տան համար ավարտվելուց հետո գալիս են հոգեւորական պատգամավորները, թեմերի առաջնորդները և փոխթեմականները Ամենապատիվ Տ. Տեղակալի և Վեհափառ կաթողիկոս Գարեգին Ա-ի առաջնորդությամբ: Նույն ստուգումն ու ցուցակագրումը կատարվում է նաև նրանց նկատմամբ:

Հոգեւորական և աշխարհական պատգամավորները գրավում են իրենց տեղերը: Նախագահական սեղանի կենտրոնում նըստում են Ամենապատիվ Տեղակալ Տ. Գևորգ արքեպիսկոպոսը և վեհափառ կաթողիկոս Գարեգին Ա-ը: Նրանց աջ և ձախ կողմերում նստում են Հայ եկեղեցու եպիսկոպոսները: Վարդապետները նստում են աշխարհականներին հատկացված տեղերի առաջին շարքում: Տիրում է խորին լուսիթյուն: Թղթոր սրատարուի սպասում են, թե ի՞ր է ի՞նչպես կսկսվի ժողովը:

Տանն Կիլիկիո Վեհափառ կաթողիկոս Գարեգին Ա-ը համապատասխան աղոթքն սեղելուց հետո ժողովը հայտարարում է բացված:

Նա հակիրծ, սակայն խիստ սրտառուշ և անկեղծ զգացումներով դիմում է պատգամավորներին, հայտնելով նրանց պատգամական այն մեծ ակտի մասին, որ նրանք պիտի վատարեն այսօր Հայաստանյայց եկեղեցու հովվապետ՝ Ամենայն Հայոց Վե-

Համառ կաթողիկոս ընտրելով՝ նա կոչ է անում լուրջ և զգաստ մոտենալ այս խընդրին, հաշվի առնել նրանց պատասխանաւովությունը ժողովրդի առաջ և լսել իրենց խղճի ձայնին:

Ի պատասխան այս կոչի, տիրում է խորին լուրջուն, որը հանգարծ բեկովամ է շշունչերով. «այո, այո, խոստանում ենք»:

Կրկին թագավորում է լուրջուն, բոլորի հայացքներն ուղղված են նախագահության սեղանին:

Հանդիսավոր առաջ է գաղիս Եփիպտոսի առաջնորդ գերաշնորհ Մամբրե եպիսկոպոս Սիրունյանը, որն իր օգնականների հետ սկսում է նախընտրական աղոթքը և սաղմուսերգությունը: Այնուհետև կարգում է երգման թուղթը բառ առ բառ, որ պատգամավորները կրկնում են հոտնկալաւ Երդվելուց հետո բոլոր աշխարհական պատգամավորները ստորագրում են երգման թուղթը:

Երգման արարողության այս ակտը վավերացվում է երդվեցնող գերաշնորհ Մամբրե եպիսկոպոս Սիրունյանի ստորագրությամբ և երգման արարողության վկաներ՝ S. Ռուգեն ծ. Վարդապետ Դրամբյանի ու S. Կարապետ ծ. Վարդապետ Թումանյանի ստորագրություններով:

Ժողովի նախագահ Տանն Կիլիկիո Վեհապատ կաթողիկոսն արտասանում է իր վերշին հորդորը. նա ասում է.

«Ճամապահ պայմանների մեջ մենք հավաքված ենք այստեղ մեր կաթողիկոսն ընտրելու: Առաջին անգամն է մեր ամրոց պատմության ընթացքում, որ Տանն Կիլիկիո կաթողիկոսը ներկա է գտնվում կաթողիկոսական ընտրությանը: Այսպիսի ժողովի գումարումը մեր պատմության մեջ հազվագյուտ է. շատ թիւ է պատահել, որ այսպիսի ներկայացուցությունն հավաքված լինի: Ազգային եկեղեցական ժողովին են ներկայացել հեռավոր Ամերիկայի հայության ներկայացուցիչները, Եփիպտոսի, Անգլիայի, Ֆրանսիայի, Բալկանյան երկրների հայերի պատգամավորները և խորհրդացին երկրների ու թեմերի առաջնորդներն ու ժողովրդական ընտրյալները: Որոշ տեղեկություններ կան, որ Հարավային Ամերիկայի պատգամավորները նույնպես ճամբար ելած են, բայց տեղի Քեռավորության և ճանապարհի դժվարությունների պատճառով դեռ տեղ չեն հասել:

«Արտաքո կարգի նշանակություն ունի

այս համագումարը, որովհետև թե՛ մեր երկրամասի և թե՛ գաղութների այս ներկայացուցությունը հանդիս է բերում մեր եկեղեցու միասնականությունը:

«Երգմանը սկսեցինք այս ժողովը ազգի և եկեղեցու անունով, կկարմինայի, որ ժողովը նվիրական և սրբազն մնար իր պարտավորությունների հանդեպ, կկամենայի այնպիսի ընտրություն կատարվեր, որ ընտրյալը լիներ ազգի ընտրյալը: Կազութեմ այս դարավոր եկեղեցու սրբազն կամարների տակ, որ Տերը առաջնորդի մեզ և մենք պատասխանատու շմնանք մեր խըղձի և ժողովրդի առաջ»:

Հայ եկեղեցու ընդունված ավանդական սովորության համաձայն Ազգ. եկեղեցական ժողովի նախագահ՝ Վեհապահ Գարեգին Ա-ը մեկ առ մեկ կարդաց Հայոց եկեղեցու եպիսկոպոսների անունները, հիշելով ներկաներին և բացականերին և երեք անգամ հարց տվեց պատգամավորներին, արդյոք չկա՞ որևէ անձնավորություն, որ հանձնարարված լինի քվեարկելու որպես ընտրելի: Ժողովականները հայտնեցին, որ նման հանձնարարություն չեն ստացել: Այնուհետև քվեարկության տուփը ստուգից և փակվեց ու դրվեց նախագահական սեղանի վրա, որից հետո Հայտարարվեց ժողովի կողմից ընդունված գաղտնի քվեարկության մասին: Քարտուղարության կողմից Տ. Գրիգոր ծ. Վարդապետ Կարապետյանը բարձրաձայն և մեկ առ մեկ կարդաց պատգամավորների անունները և յուրաքանչյուր պատգամավոր մոտենալով նախագահական սեղանին ստացավ քվեարկության տուփը, որի վրա պիտի նշանակվեր մեկ թեկնածուի անուն և ազգանունը և նետվեր տուփի մեջ, Վերոհիշյալ ձեռվ յուրաքանչյուր պատգամավոր տվեց իր քվեն:

Պատգամավորների անուններն ու ազգանունները ստուգելիս, պարզվեց, որ բացակայում են Հայեապի պատգամավոր Արշակ Գալեմքերյանը և Վրաստանի պատգամավորներից. Սամվել Շահպարոնյանը հիվանդության պատճառով:

Նախագահ Վեհապահ կաթողիկոսի հրամանով տուփը բացվեց, մկանից քվեների ստուգումը:

Խորհրդավոր լուրջյան մեջ բոլորը լարված ուշադրությամբ հետևում էին քվենների ընթերցմանը.— «Զերորեգլյան Սրբազն, Շեղակալ Գեորգ, Գեորգ արքապիտ-



Նորինտիր Հայրապետը պատգամավորների ուղեկցությամբ Մայր Տաճարից
մեկնում է վեհարան (ընտրությունից հետո)

կոպոս», անընդհատ հնչում էր թվեները կարդացող Մամբրի սրբազնի ձայնը: Կարդալով թվեները նա հանձնում է ժողովի կողմից նշանակված 2 ստուգողներին, որնք նույնը վավերացնելով և մեկը մյուսին հանձնելով թվեները դարսում են սեղանի վրա:

Ժամը 4-ին 45 րոպեին Վեհափառ կաթողիկոս Գարեգին Ա-ը հայտնում է թվեարկության արդյունքը. ներկա է 111 պատգամովոր, 110 թվեարկության արքեպիսկոպոսը ընտրված է Ամենայն Հայոց կաթողիկոս, այդ մեկ թվեն էլ իրենն է, որ նա տվել է ինձ, — ծիծաղելով հայտնում է Վեհափառը: — Ուրեմն ընտրվել է միաձայն, — հայտարարում է վեհափառ Գարեգինը:

Սափահարությունների և կեցցեների որոտը թնդացնում է հինավորց տաճարի գմբեթները: Ամենապատիլ Գեղրդ արքեպիսկոպոսը հոգված է, արցունքները ողողել են նրա դեմքը:

Հուշված են գրեթե բոլոր պատգամավորները. շատերի աշքերն լցված են բերկրանքի և ցնծովյան արցունքներով:

Նորընտիր Հայրապետին մատուցվում է Հայրապետական գավազանը, տաճարի սեղանների գարագույնները բացվում են, Մայր ամաճարի զանգափներն ակսում են դպրանչել ավետելով Հայ հավատացյալներին բերկրության ու ցնծովյան ավետիսա:

Տաճարը թեղում է ռշմիածինն ի հօրէ շաբականի քաղցրալուր մելոդիաներով, Այն երգում է ողջ պատգամավորությունը հուտնկայա:

Ն Ի Ս Տ Ե Պ Թ Ե Ր Ո Ր Դ

1945 թ. հունիսի 25-ին, ցերեկվա ժամը 1-ին 30 րոպեին սկսվում է Ազգային-Եկեղեցական ժողովի եռթերորդ նիստը:

Սա Ազգային-Եկեղեցական ժողովի վերջին նիստն է:

Ժողովին նախագահում է նորին Ս. օծությունն Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոս Տ. Տ. Գեղրդ Զ-ը, որն արտասանելով Համապատասխան աղոթքները ժողովը հայտարարում է բացված:

Ատենապետում է բանաստեղծ Ավետիք Խոհակյանը: Ատենապետն առաջարկում է քարտուղարությանը կարդալ նախորդ երկու նիստերի ագձանագրությունները: Գարտուղարության անդամ Առաքել Գեղրդ Յաղընյանը կարդում է արձանագրությունները, ո-

Շատերն իրենց հոգմուքը վկարողանալով կամբակ իմբակում են նորընտիր վեհափառի շուրջը, ամեն մեկն աշխատում է մի վայրկյան առաջ համբուրել նրա Ս. Աշը և շնորհավորել նրան:

Վերջապես բացվում է Մայր տաճարի ավագ դուռը և պատգամավորությունը շարագանների երգեցողությամբ և կեցցեների ցնծագին որոտներով նորընտիր Հայրապետին առաջնորդում է գեղի վեհարան:

Վանքի գավթում համարված խուն բազմությունը ծափահարությամբ և կեցցեներով ղիմավորում է վեհափառին:

Նրանք շարվում են ճանապարհի երկու կողմում և հանդիսավոր թափորն անցնում է գեղի վեհարան:

Վեհարան տանող սանդուխների վրայից նորընտիր Հայրապետը իր առաջին օրնությունն է տալիս ժողովրդին և պատգամավորներին «ապահպանից» կարգում:

Պատգամավորությունը ժամը 5-ին 30 րոպեին առատում է վեհարանի գավթը:

Խուն բազմությունը չի հեռանում վեհարանի բակից և վանքի գավթից:

Այն ուժը, որ համախմբել է նրանց այս տեղ, ոգևորել ու թևեր տվել, ազգային միասնության և մեր պետականության դպրափարն է:

Ուշ գիշերին միայն վանքի շրջապատը դատարկվում է և խորհրդավոր ու անմռուածիլի երեկոն իր թևերն է փռում հինավորցը, պատգամական վանքի գմբեթներին:

Բոնք փոքր համելումներով ընդունվում են ժողովի կողմից:

Այսուհետև ատենապետն առաջարկում է ժողովին զքաղզել օրակարգի առաջին իրնության այսինքն Հայ եկեղեցվո Սահմանադրության քննությամբ և վավերացումով:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը ժողովի ուղագրությունը Հրավիրելով այդ հարցի վրա ասում է. «Հայ եկեղեցվո Սահմանադրության քննությունն ու վավերացումը պիտի կատարենք այսօր, անշուշտ այն վերջնական չէ, որովհետեւ, եթե բարյական ըմբռնումները վերածվում են իրավականի, նրանք միշտ վիճաբանության առարկա են դառնում, ուստի խնդրում եմ խատապահանջ վիճել և շնորհանալ մանրամասնությունների մեջ»:

Դերաշնորհ Մամբրի եպիսկոպոս Սիրունյանի առաջարկով քարտուղարության անդամ քարծրապատիվ Տ. Գրիգոր ծ. Վարդապետը կարդում է նախագահության և Ատենապետության կողմից նախօրոք սըրբագրված Հայոց եկեղեցու Սահմանադրության նախագիծը:

Նախագիծի ընթերցումն ավարտելուց հետո, ինչպես հոգևորական, նույնպես աշխարհական պատգամավորները մի շարք դիտողություններ արին, որից հետո Ամենայն Հայոց նորընտիր վեհափառ կաթողիկոս Գեորգ Զ-ը առաջարկեց հետեւյալը, որ ժողովն ընդունեց միաձայնությամբ:

Ենկատի առնելով, որ Սահմանադրության մեջ արծարծված միասնականության գաղափարը, ինչպես նաև Կիլիկիո կաթողիկոսական Աթոռի և պատրիարքական զուգ աթոռների փոխարարքերությունները ենթարկված են հոգևորականների նախապատրաստական ժողովի քննության և որոշ համաձայնություն է գոյացած, այլ և նկատի ունենալով, որ միասնականության դաշտարը նոր է հանդես բերված և Աթոռների փոխարարքերությունները դարձած են իրավականի, որ շատ դժվարին գործ է, ինչպես նաև նկատի առնելով, որ ներկա նպականի վերջնական բնույթը չունի, Ամենայն Հայոց Կաթողիկոսի կոնդակով պիտի առաջարկվի խմբագրված Սահմանադրության գործադրությունը ժամանակավորացնելու և գործնական բովից անցնելի հետո, հաջորդ Ազգային եկեղեցական ժողովի կողմից վերջնականապես պիտի խմբագրվի և հաստատվի, ուստի կառաջարկվի Հերկան նախագիծն ընդունել անփոփոխ:

Այնուհետև ատենապետի հայտարության համաձայն տեղի ունեցավ կարճատև ընդդիշում:

Ընդմիջումից հետո նիստը վերսկսվեց և ատենապետ Ավետիք Խաչակրանը կարդաց կ. Պոլսի պատգամավորներից՝ երվանդ հնձեքյանի և Թորոս Ազգային ներկայացրած հետեւյալ գրությունը պատճենական անվագալու ու ներկայացրած անվագալու անվագալու անվագալու մեջ առնելով, որ մեր կամբեն անվախ պատճանակով Թորքիո Հայոց պատգամավորությունը շկարողացավ ժամանակին հասնել, նկատի ունենալով, որ մեր պատգամավորության միակամ ընտրելին՝ որպես արժանավորագույն թեկնածու մեր Հայաստան ժամանումն առաջ ալ միեվնույնն էր, կը խնդրենք Ազգային—եկեղեցական ժողովին, որ մեր վեց ձայները վեհափառ Տ. Տ. Գե-

վորգ Զ Սրբազն կաթողիկոսն ընտրող 110 ամբողջական ձախերուն միացվեն և ըստ այնմ մտցովի այս պարագան ժողովի արձանագրությանց մեջը: Այս առաջարկն ընդունվեց միաձայնությամբ:

Հալեպի պատգամավոր Արշակ Գալեմբարյանը, որ հիվանդության պատճառով քարոզական ընթերցել ներկա լինել Հայրապետական ընտրությանը, խնդրեց ժողովին իր քվեն ևս ավելացնել Ամենայն Հայոց Հայրապետի միաձայն քվեների վրա: Ժողովի կողմից սույն առաջարկն ընդունվեց միաձայն:

Այնուհետև նորին Ս. Օծություն Վեհափառ կաթողիկոսը առաջարկում է ժողովին մի հանձնաժողով ընտրել Սպավական Սիրության հանձնարեղ առաջնորդ Մարշալ Ստավինին ուղարկվելիք դեկլարացիան մշակելու և խմբագրելու: Այս խնդրի շուրջը տեղի ունեցած կարծիքների փոխանակությունից հետո Տանն Կիլիկիո վեհափառ կաթողիկոս Գարեգին Ա-ի առաջարկով որոշվեց դեկլարացիայի պատրաստումն ու խմբագրումը թողնել նախագահության և ատենապետության հաջորդ նիստին ներկայացնելու համար:

Օրակարգի հաջորդ հարցը Գերագույն հոգևոր Խորհրդի ընտրությունն էր: Նախագահության և ատենապետության կողմից առաջարկվեցին հոգևորականներ Տ. Ռուբեն ծ. Վարդապետ Դրամբյան, Տ. Վահան ծ. Վարդապետ Կոստանդնավան, Տ. Ներսիս ծ. Վարդապետ Արքահամբյան, Տ. Եղիշե Վարդապետ Հարությունյան, Տ. Կարապետ ծ. Վարդապետ Թումանյան (անձնափոխանորդ), աշխագողականներ՝ պրոֆ. գոկտոր Ստեփան Մալիսայան, պրոֆ. գոկտ. Աշոտ Արքահամբյան, դասախոս՝ Մինաս Մինասյան, հոգեւոր ճեմարանի պապա տեսուչը և Ստեփան Կամսարական (անձնափոխանորդ): Ժողովը միաձայնությամբ ընդունեց հոգևոր Խորհրդի վերոհիշյալ կազմը:

Սակայն պրոֆ. Աշոտ Արքահամբյանը շափազանց զբաղված լինելու և առողջական վիճակի պատճառով հրաժարվեց Գերագույն Հոգևոր Խորհրդին մասնակցելուց: Ժողովը նրա փոխարեն ընտրեց Երվանդ Շահագիզին:

Ամերիկայի Արևելյան թեմի առաջնորդ Տ. Տիրան ծ. Վարդապետի այն հարցումին՝ թե ժողովը նկատի պիտի առնի՝ եկեղեցու բարեկարգության հարցը, Վեհափառ

Հայրապետը պատասխանեց, թե իր շորս տարվա տեղակալական կողմաննեւթյան առթիվ աված զեղուցման մեջ արդեն հայտարարել է, որ Ազգային-եկեղեցական ներկա մողովը բարեկարգության հարցով ըղբաղվելու հնարավորություն չունի, թե՛ ժամանակի սղության և թե՛ այլ պատճառներով:

Այսուհետեւ ժողովի ատենապետը հայտարարում է, որ կոնդոնի Արքարյան տրեստի պատգամավոր Սարգսի Քյուրքչյանը իր կնքահայրության առթիվ (հայրապետական օծման) 2.000 անգիտական ոսկի է նվիրում Ս. Էջմիածնում մեղվաբուժական տնտեսություն ախսելու նպատակով, որն ի հիշատակ իր հանգուցյալ մայր նարդուհիի պիտի կոչվի «Նարգուհի Նազարեթ Քյուրքչյան մեղվաբուժարան»: Ժողովը ծափահարություններով իր գոհումակությունը հայտնեց այս նախաձեռնության առթիվ, որից հետո ժողովը ժամը 3-ին 15 րոպեին փակվեց, երեկոյան ժամը 7-ին վերսկսելու համար:

Նիստը վերսկսվեց երեկոյան ժամը 7-ին և 45 րոպեին: Նախագահում է նորին Ս. Օծություն վեհափառ Հայրապետը, տանհաւաբառում է բանաստեղծ Ավետիք Խաչիկյանը:

Վեհափառ Հայրապետը խոսք առնելով, հայտնեց, ոլորտությամբ հայտարարում է գիտություն ժողովի, որ մեր շարքերում է գտնվում ազգային բարեկործ իրան-Հնդկաստանի թեմից՝ պ. Ռուման Բողոքանի Խայեվը, որը թեհրանում 600.000 թուման ծախսելով կառուցել է մի եկեղեցի. նա նվիրել է Կարմիր Բանակին 250.000 թուման, Բաղրամյանի անվան տանկային շարասյան օգտին նվիրել է 500.000 թուման:

Եներկայումս երեանում կառուցելու է մի մանկասուն պատերազմի ընթացքում զոհված զինվորների երեխաների համար, հատկացնելով այդ նպատակի իրավուրծանը 250.000 թուման, նաև Ամենայն Հայոց Հայրապետի քնտրության և օծման առթիվ նվիրել է ամերիկյան մի շքեղ ավտոմեհենա, ուստի առաջարկում է ժողովին նրան ընդունել նախագահության մեջ:

Ժողովը բուռն ծափահարություններով իր հավանությունը տվեց այս առաջարկին:

Կարգացվում է Սովետական Սիության Գերագույն Սովետի նախագահության նախագահ ի. Կալինինին ուղղված հեռագիրը,

որը ընդունվում է խանգավառ ծափահարություններով:

Ամերիկայի արևելյան թեմի առաջնորդ Տ. Տիրան ծ. վարդապետուն ի դիմաց պատգամավորության կարգաց հետեւյալ ուղերձը:

Մինք Ազգային եկեղեցական ժողովունդամեներս, աթոռակալներ, թեմական առաջնորդներ, հոգևորական և աշխարհական պատգամավորներն եկած ու հավաքված ըլլալով հշմիածնի Ս. Տաճարի նվիրական հովանիքին ներքեւ, Հայաստանի, Սովետական Միության և արտասահմանի զանազան երկիրներու թեմերեն, զեղուն սրտով կրհայտնենք Զերդ վեհափառության մեր երախտագիտական գուցումները այն իմաստում և քաջարի ղեկավարության համար; Որով առաջնորդեցիք մեր սուրբ եկեղեցին Զերծարանկահիշատակ նախորդին վախճանումնեն ի վեր, ամենագծվարին պայմաններու ներքեւ և Հայրենական մեծ պատերազմի ընթացքին, և ի գլուխ բովանդակ հայ հավատացյալներու Զերդ բաժինը բերիք փառապանծ հաղթանակի համար կերտված արժանի զոհաբերության:

«Ենորհակաց ենք նաև այն զգոն և հայրական ղեկավարության համար, որով այս ժողովը արդյունավորեցիք և արժեցուցիք անոր պատմական նշանակությունը»:

Ըներկայում միարան և առանց վերապահության կրայտնենք մեր որդիական վստահությունը նաև առ այն, որ Դուք ապագային ևս զրացած մեր ամենուն սիրովը և մասնավոր Աստուծո ամենաբանական ողորմությամբ պիտի տանիք Հայեկեղեցվունավը ուղղի և ապահով գծով: Եվ վերջապես ամենք և յուրաքանչյուրս անխտիր այս սրբազնա վայրին մեջ հանդիսավորապես կը խոստանանք Զերդ վեհափառության, իբրև մեր սուրբ եկեղեցվու պետին և ղեկավարությին, մեր հոտի վերին հովվին, մեր անկեղծ և բոլորան մեր հավատարմությունը և հնազանդությունը Հայցելով մեր Տեր Հիսուս Քրիստոսն, որ զորացնե Զերդ բազուկը և առաջնորդե Զերդ իր սուրբ հոգվույն իմաստությամբ և շնորհն Զերդ երկար և արդյունավոր կյանք Զերդ առաջարական Աթոռին վերաբերա»:

Ժողովը միահամուռ և անվերջ ծափահարություններով ընդունեց Ամենայն Հայոց Վեհափառ կաթողիկոսին ուղղված այս ուղերձը:

Զայն խնդրելով պրոֆեսոր Արարատ Ղա-

րիբյանը հարց առաջադրեց, որ Աղքային եկեղեցական ժողովը իր վերաբերմունքն արտահայտի Վատիկանի բռնած ընթացքի մասին՝ հանգեց Փաշիստական Գերմանիայի ղեկավարների:

Ժողովը լսելով նրա բացատրությունները և լուսաբանությունները շոշափված հարցի առթիվ նպատակահարմար համարեց այլ խնդրի ձևակերպումը թողնել վեհափառ Հայրապետներին։ Այս առաջարկն ընդունվեց միաձայն։

Այնուհետև խոսք տրվեց ժողովական պատգամավոր առաջնորդներից ամենաավագույնին՝ Հոմաստանի առաջնորդ Տ. Կարապետ արքեպիսկոպոս Մազմյանին։ Նա խստ հոգված ներկայացրեց այն հրակա աշխատանքը, որ կատարել է Աղքիս նորընտիր վեհափառ Հայրապետը բարձրորեն գնահատելի վարչափառությամբ։ Արտաքին բարեմալթություններով արևշատություն մաղթեց Սովետական Միության հանձարեղ առաջնորդ Մեծ ՍՏԱԾԽՆԻՆ, Հայաստանի ՍՍՌ Գերագույն Սովետի նախագահ Մացակ ՊԱՊՑԱՆԻՆ։

Ի դիմաց աշխարհական պատգամավորների խոսք իմնդրեց Էոփեն Բարեգազյանը, որը պատկերագոր ներկայացրեց Հայ եկեղեցու միասնականության իրողությունը։ Նա ասաց. «Հիացմունքով ու պատկառանքով նայենք սա փառավոր տեսարանին, երկու կաթողիկոսներ քով քովի նստած, որ երբեք եղած չէ։ Գիտակցենք այս նշանակալից պահում արժեքով։ Մեր Հայրերը բախտ շոնեցան հանդիսատես ըլլալու նման հուզիչ ու ներշնչող իրողության մը։»

Կեցցե մեր Սովետական Հայաստանը իր բարեիմամ և շինարար կառավարությամբ, Կեցցեն մեր վեհափառները։

Ի դիմաց Հայաստանի ժողովրդի հանդես եկավ պրոֆ. Արարատ Ղարիբյանը, նա ասաց հետեւյալը. «Հայ եկեղեցին կատարեց իր պատմական հագվագյուտ դերը Զեր բոլորի միջոցով Հայ ժողովրդն այժմ գտնվում է իր հողի վրա։ Հողեպիս հրճվում եմ, տեսնելով, որ այս ժողովը կարողացավ հանդես բերել միասնականություն հօգուտ Հայ ժողովրդի և եկեղեցու Տանն Կիլիկիո վեհափառ կաթողիկոսն այս միասնականության կենդանի օրինակը հանդիսացավ իր խորը հմտությամբ և բուն հայրենասիրությամբ։ Հսկա հայրենասիրություն կա նրա փոքր մարմնի մեջ

և այդ հայրենասիրության կրակը տարածվում է ամեն կողմէ։

«Մեր նորընտիր Հայրապետ Գեորգ Զ-ը բարձրացրեց մեր ազգի արժեքը, եկեղեցու պատիվը, արդարության և հայրենասիրության ճանապարհով։ Թող ողջ գաղութահայությունը լին և փատենա, որ իր Հայրենիքի մեջ մտածում են, խոսում ու գործում են բազմահազար մարդկան և ստեղծագործում են թե իրենց և թե գաղութահայերի համար։

«Մեր նորընտիր վեհափառը, որ օրհնեց Հայաստանի այս մասը, հավատում եմ, որ նա վաղը պիտի օրհնի նաև մյուս մասը։

«Տարեք Զեզ հետ մեր ժողովրդի անայլաց սերը մեր եղբայրներին, բարով եկաք, հազար բարի, միշտ եկե՛ք, մեր սրտի մեջ լայն տեղ ունեք» (բուն ծափեր)։

Մայր Աթոռի միաբանության կողմից ողջ ըրբի խոսք է ուղղում պատգամավորներին Ս. Էջմիածնի միաբան Տ. Ռուբեն ծ. վարդապետ, Դրամբյանը։

Որդիական անխառն զգացմամբ շնորհավորելով նորընտիր Հայրապետի գահակալությունը, նա գտնում է, որ Մայր Աթոռը էլ ավելի վառ կպահէ Հայ ժողովրդի միասնության ջահը, համարելով այն իր գործունեության գերագույն նպատակը։ Սրտագին բարեմալթություններով դրվատեց Սովետական Միության և Հայաստանի կառավարությունների բարյացակամությունը դեպի Մայր Աթոռը։ Նորընտիր Հայրապետին երկար և արդյունաշատ կյանք մաղթելով նա վերցացրեց իր խոսքը։

Այնուհետև նորընտիր վեհափառ Հայրապետ Տ. Տ. Գեվորգ Զ-ը արտասանեց Աղդամյան եկեղեցական ժողովի փակման հետեւյալ ճառը։

«Ծնորհակալություն քոլոր նառախոսեցին։

«Պատգամավոր մեր զավակներն իրենց խոհական գործերով և իմաստուն խոսեցով մայեցին մեզի։ Ժողովը կույց տվեց առ ընդգծելի կողմեր։»

«Տեսնում եմ իայ ժողովրդի դեպի Ս. Էջմիածինը Խնեցած անենուն սերը. այդ սերն է, որ Զեզ ենուալոր վայրերից խոշնուրղն է մինչև այստեղ, առ ոչինչ դարձելով նաևապարհորդական նեղություններն ու դժվարությունները։

«Հայ եկեղեցին ցարդ բարոյական տեսակետով միասնական էր, բայց իրավական

տեսակետով նշ: Տաճն Կիլիկիո Վեհափառ կարողիկոսը նկատի շառնելով Երկար ճամբորդության մետ կապված դժվարությունները անձամբ եկավ իրեւ ուխտավոր և նշարիտ ու դրական միասնականության հիմքը դրավ:

«Այսօր տեսա համերաշխության ոգին վերաբարձած մեր մեջ, /որի համար պիտի աղործմ, որ այս Աշտարքնեական դառնա:

«Տեսա Ձեր բուռն դզացմունքը դեպի Ս. Էջմիածինը և դեպի մեր սիրելի Հայրենիքը, որ բարձր վերելներով փառակրված է: Պիտի աղործմ Հայրենիքի և պետության զրացման համար:

«Ենու տեսաք, թե ինչպիսի համերաշխություն կա պետության և եկեղեցու միջև և ինչպիսի ազնիվ զգացումներ իրար հանդեպ: Տեսաք, թե ինչպիսի դժվարություններ հարցված են և ինչպիսի հառաջադիմություն կա մեր Հայրենիքի մեջ: Այս բոլորը տեղի են ունենում և իրական անուն են խոս մեծ ժողովրդի և հրա մեծ պետության միջոցով:

«Օրինում եմ ոռու մեծ ժողովրդին և նրա Մեծ Առաջնորդ Մարշալ ԱՄԱԼԻՆԻՆ:

«Օրինում եմ և Ձեզ բոլորիդ, օրինում եմ հայ ժողովրդին, որ Ձեզ նման խոհական ենրկայացուցիչներ ընտրեց:

Վերջացնելով իր ճառը, նորին Սուլոր Օժությունը արտասահնեց տերունական աղոթքը և Հայրապետական «պահպանիչ» կարդաց:

Այնուհետև Համազգային եկեղեց. Ժողովի պատգամավոր Արարատ Ղարիբյանը կարգաց ժողովի փակման առթիվ ՄՄՌ Միության հանճարեղ Առաջնորդ Մեծ ՄՏԱԼԻԽՆԻՆ ուղղած հեռագիրը, որ ընդունվեց երկարատև ու խանդավառ ծափահարություններով:

Ժողովի ատենապետ ակադեմիկոս Ավետիք Խաչակրանը Հայտարարեց, թե 1945 թվի հունիսի 16-ին բացված Ազգային եկեղեցական ժողովը սպառել է իր օրակարգի բոլոր Հարցերը և հետևապես այն փակված է Հայտարարվում:

Կեցցեների խլացուցիչ աղաղակը ընդգրրկեց ողջ դաշնիճը: Ժողովականները երկար ժամանակ շդադարող ժափահարությամբ և հոտնկայս իրենց շերմ զգացմունքներն էին արտահայտում գեպի Մայր Աթոռը: Երբ Վեհափառը ոտքի կանգնեց ժողովապահից դուրս գալու դիտավորությամբ՝ շերմագին բացականչություններն ու ծափահարությունները ուղղված նորին Սուլոր Օժությանը էլ ավելի սաստկացան և շքախումը ժողովունքի բերկրալից սիրով շարժվեց առաջ՝ Վեհին առաջնորդելով դեպի վեհարան:

Հունիսի 25-ին, երկուշարթի, երեկոյան ժամը 10-ից 15 րոպե անց փակվեց Ազգային եկեղեցական ժողովը:

Ռուբեն Եպիսկոպոս ԴՐԱՄԲՅԱՆ

